

# ՍԻՕՆ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 6.

ԱՄՍԱԳԻՐ

ՅՈՒՆԻՍ 30
1875.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

## ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾ

Ճանաչելու համար խորհուրդ պէտք է, շինելու համար միութիւն եւ գործ

Արարչագետն իւր հեղինակութիւնն իւրեն գործերով հաստատելու և ապացուցանելու համար, խորհրդով յօրինեց երկնից կամարը, և անոր մէջ հաստատեց այն սքանչելարուեստ աստեղաց կարգաւորութիւնը, անոնց գեղեցկատեսիլ տեսարանն, անխափան և անխոտոր շարժումներն և շրջանները, լուսնոյ գեղազարդեալ դէմք և լուսաւորութիւն եւ նորա անվրէպ շրջանն, արեգական ընթացքը, նորա լոյսն և ճաճանչաւոր ճառագայթն, և այս հաստատութեանց միջոցաւ մեր երկրագնդի փայլեալ բարիքները.

Սոյք անտարակոյս ցենց կը հաստ-ցին և կը հաստատեն ամենակարող և անսխալ արարչապետ հեղինակի մը գոյ լինելն ։

Նաեւ երբ հաստատն խորհրդով նըկատողութեան կ՚առնուի հողագնդիս երեսը թռչնոց յօդս սաւառնիլն, եւ ճախրելը, ծովերու կարգաւորութիւնըն եւ անոնց անդր քան զսահման չանցանելն, անոր ամեհի փոփոխելեաց ալեաց յինքն խորտակիլն և խորտակիլը, նոյա մէջ ձկանց և այլ կենդանեաց աճիլն և բազմանալը, ծնանիլն և անանիլը, նոյա զարմանազանց ընդոյը, որոց մեզ տարակուսութիւն չեն թողուր ամենազօրաց հեղինակի հան-

ճարոյն գործ լինելոյն եւ նորա նախախնամութեան վրայ , թէ յերկինս , և թէ յերկրի , թէ 'ի ծովու և թէ 'ի ցամաքի տարածելով կը խնամէ և կը պահպանէ եղածները ։

Երբ քննութեան կ'առնումք երկրի երեսի վրայ բուսած ծառերը , տունկերը , խոտերը , ծաղիկներն և անոնց զմայլելի անուշահոտ բուրումներն և նոյն մատակարարած պտուղներն եւ բարիքները մեր կենաց պահպանութեան համար ։

Երբ կը տեսնեմք ամպերու անձրեւին , արեգական ջերմացմանը և երկրի բուսուցմանը , այս զարմանաքանչ առնչական անհուն հեռաւոր և անմիջական մերձաւոր առանձնական յարաբերութիւնները , չեմք կրնար չը խոստովանիլ սոյն ամենակարող և ամենակատար արարչապետի մը հեղինակութենէն բղխիլն և նորա ակնարկութեամբ կառավարուիլը ։

Այս ամեն առեղծուածներու մէջ մարդն աւելի կատարեալ ստեղծուած է , և բանաւորութեամբ կը տարբերի միւս ամէն կենդանիներէն և թռչուններէն , ու ծովու մէջ լողացողներէն , զի նոքա ինչ որ կը գործեն լոկ բնազդմամբ է , իսկ մարդս հոգւոյ կարողութեամբ , այն է խորհրդով ։

Մարդիկ երբ լոկ զգայմամբ կը գործեն եւ կամ կամաց թելադրութեամբ առանց խորհրդոյ միջամտութեան , նոյն գործերը միշտ անուղիղ և սխալ կը լինի բնազդեցական գործերու պէս , իսկ երբ խորհրդեան կը յանձնեն իրենց անելի գործերը եւ նորա վճռոյն կըսպասեն , այն ժամանակն ուղիղ կը լինի մարդկանց գործերը և կամ շատ քիչ կը սխալին ։

Մարդիկ ուղիղ գործելու համար պէտք է որ շատ խորհին և խղճի անարատութիւնը պահեն , որպէս զի կիրքերէն չը նուաճուին ։ Սեղծապատմագրոց մէջ տեսած տեղեկութեանց նայելով , դառնաճանութեան մը միջոցաւ , մարդս իւր առաջին գերազանցութիւնը կորսնցուցած , նախանձու , ատելութեան , բարկութեան , փառասիրութեան , ախտակրութեան , անյագ ցանկութեան կիրքերն այն աստիճան զօրացած և նորա այն վսեմ բանաւորութեան վրայ տիրապետած են , որ մարդը ալ չէ կրցած իւր բանականութեան հաւասարակշռութիւնը պահել և կրից ձեռք խաղալիկ եղած վարեր են զինք ըստ կամս իւրեանց , որով մարդկային սերնդեան խորհելու կարողութիւնը խանգարուած և ածանցաբար իրարու ներգործած , մինչեւ անասնական վիճակին իջած է երբեմն մարդկութեան տոհմն ։

Երբ պատմութիւնը մեր աչքի առաջը կ'առնումք և սկիզբէն մինչեւ մեր օրերը մարդկութեան վիճակի վըրայ ակնարկ մը կը ձգեմք , որքան որ կիրքերէն յափշտակուած եւ նուաստ վիճակի գիջած և իջած անթիւ և անհամար մարդիկ կը տեսնեմք , սակայն եղեր են այնպիսի մարդիկ ալ , որք մարդկութեան նշանաբանը ճանչցած , եւ նորա վեհութիւնը պահած կ'առաւելցած և կ'առաւելուած են ուղիղ բանի առաջնորդութեամբ առանց կրից անսալու ։ Վասն զի որքան որ կիրքերը զօրացած և տիրապետած էին մարդկանց վրայ սակայն բանականութեան անաղօտ և ճշմարիտ լոյսը յաղթելու չափ ալ չունէին , ուստի տիրելոյն տեղ և ինքզինքնին կրից հաճոյից խափանսիկ հեշտութեանց և երեւակայական բարեաց յանձնուող մարդերուն միայն , որք կրից հաճանց առջեւ ինկած կ'երեւային ։

Չը կրցան տիրել այն մարդկանց , որք միշտ դիմադրեցին այն առ երե-

digitised by A.R.A.R.@

ւոյժ բարեաց, և անխոնջ աշխատեցան բանաւորութեան ճշմարիտ լոյսն յիրերանս վառ և պայծառ պահել, թէև շատերը վնասուեցան հարուածուեցան հալածեցան և 'ի մահ իսկ դատապարտուեցան, բայց չը խոտորեցան յուղղութենէն, և անոնց աշխատութեան արգասիքն է որ այսօր կը վայելեմք 'ի տեղիս տեղիս ։

Բանականութեան խանգարումն և կրից տիրապետելու չար որոմներն, աշխարհիս մէջ հրէշ զաւակներ ծնան, որք սկսեցին ուղղութիւնը թիւրել, ազատութիւնը գերել, հաւասարութիւնը ջնջել,

Եւ այս կարգի մարդիկներէն զօրաւորն ուզեց անզօրին վրայ իշխել, տիրապետել, կեղեքել կողոպտել, անիրաւել, պատժել և հնազանդեցնել անհնազանդները և իրեն կամաց չհպատակողները 'ի մահ իսկ մատնել, կարծես թէ զօրաւորն կամ այն մարդկանց արարիչն լինէր և կամ նոցա վրայ իշխելու համար յԱստուծոյ իշխանութիւն մը առած լինէր ։

Հարցուր դու այդ զօրաւորին թէ դու ով ես, կը պատասխանէ որ քեզի պէս մարդ և քու եղբայրդ եմ. ուրեմն ինչու՞ իշխել կ'ուզես իմ անձիս և ստացուածոյս վրայ, դու քեզ համար աշխատէ ապրէ, և ես ինձ համար ։ Նա կը պատասխանէ, որովհետև ես քեզմէ զօրաւոր եմ, պէտք է որ ես քու վրադ իշխանութիւն ունենամ և դու պիտի աշխատիս միշտ, ու ես պիտի ուտեմ և հանգիստ կեանք վարեմ ։ (Թէ ինչու՞ բնութեան հեղինակը ամէնքը միազօր և հաւասար չըրաւ որ այն զօրաւորը այն պատասխանը չի տար, հեղինակի այս անհաւասարութեան գործն իրեն վերապահեալ գաղտնիքներէն մին համարելէն 'ի զատ ուրիշ բան չեմք կրնար ըսել ։ )

Իրաց այս վիճակի մէջ երբ տկարն տեսաւ որ հզօրին յաղթելու չափ ուժ չունի, աշորեկ եղած պահ մը լռեց, ու հնազանդեցաւ ակամայ կամօք, և իրեն վրայ 'ի գործ դրուեցաւ փոխանակ սիրոյ, ատելութիւնը, փոխանակ իրաւանց՝ անիրաւութիւնը, փոխանակ օգնութեան՝ անօգնականութիւնը, փոխանակ գթութեան՝ անգթութիւնը, փոխանակ մարդասիրութեան՝ ատելութիւնը, փոխանակ եղբայրսիրութեան՝ եղբայրատեցութիւնը, փոխանակ արդարութեան՝ անարդարութիւնը, ու զրկողութիւնը, փոխանակ ճշմարտութեան՝ ստութիւնը, փոխանակ գիտութեան՝ ագիտութիւնը փոխանակ միութեան՝ անմիութիւնը, այս ամէնը մարդկութեան գլուխը կ'ուտելով բաժանեցին, հալածեցին, հարուածեցին, կեղեքեցին ։

Խեղճ զրկեալն առ ով բողոքէր, առ ճշմարտութիւնն, նա արդէն քողարկուած և մշուշներու մէջ պատատուած էր ։ Առ արդարութիւնը, նա հարուածուած էր ։ Իւր եղբօրը ձեռք կառկառ էր գթութիւն հայցէր, խարամանկութիւնը արդէն զայն հեռացուցած էր իւր եղբօր ձայն չը լսելու համար, և ինչպէս որ սա այս բանապետի ձեռօք կը հարուածուէր, այնպէս ալ իւր եղբայր, ուրիշ բանապետի մագիլներու մէջ ինկած կը փետուէր ։

Պատմէ դու այն բանաւորին թէ բնութեան հեղինակը երբ առաջին մարդն մեր ամենուս նախահայրն Ադամն ստեղծեց աճելու և բազմանալու հրաման տուաւ, այս երկրագունդը մեզի բնակութեան տեղի և ամենուս հաւասարապէս աշխատելու վարելու, ցանելու, տնկելու, գործածելու հնձելու, շտեմարանելու ազատ և հանգիստ վայելելու համար սահմանեց, և ամէնքս հաւասարապէս բաժին ու-

digitised by A.R.A.R.@

նիք այս հողագնդիս մէջ , վասն զի թէ ամէնքս մի և նոյն հեղինակի գործերն ենք և թէ իբրեւ հաւասար եղբայր ժառանգ և ժառանգակից ենք սորա , իբրեւ մեր նախահօր Ադամայ ժառանգութիւնը ։ Արդ , դու ինչ խրատով զիս կը զրկես իմ բաժինս կը յափշտակես , ոչ ապաքէն երբ դու այսօր իմ բաժին երկիրս ձեռքես կը խլես , վաղը իմ կենացս դատաձան կը դառնաս , եթէ չունենամ երկիր մշակութեան տեղի , ուր աշխատիմ և ինչով ապրիմ ։ Նա քեզ այդքան շնորհք կ՚ընէ բանով թէ որովհետեւ ես քեզմէ զօրաւոր եմ , ամէն բանը իմս է , միայն քու հոգեպահիկդ քեզ կը տրուի օրով պիտի ապրիս եւ աշխատիս ինձ համար , եթէ չը հնազանդիս պիտի մեռնիս ։ Կը պաղատի զրկեալն , ուրեմն արձակէ զիս որ երթամ ։ Թող քեզ լինի ամէն ունեցածս , սակայն պատասխան կ՚ընդունէ , ազատ չես երթալու կապեալ ես ինձ և դու քու անձիդ ազատ տէրը չես , ես եմ նորա տէրը , և դու իմ իշխանութեան հլու հպատակը , և կամակատար ծառայ , ուրեմն հնազանդէ ու աշխատէ ։

Առ այս ահարեկ եղած ժողովուրդն թող տալու որ զինք գերութեան շղթաներով պարտաւորեցին և բռնութեան ու տիրապետութեան անտանելի անուրը նորա վզի վերայ դնելով վարեցին իրենց կամաց և հաճոյից համեմատ , ժողովուրդը զայրանալ և աւաղ կորգաց ու նզովից իր ծնած օրը և ինք մնաց բռնաւորի վայրագ մագիլներու մէջ շնչասպառ և կը հեւար անոք և անօգնական ։

Ժողովրդին այս վիճակը թէև բռնաւորին շահն էր և կամաց հաճելի , զի իւր փառք բարձրացած կը տեսնէր , և կեանք անաշխատ և հանգիստ , եւ ապահով , սակայն միւս կողմէն կինար դգալ թէ՝ արդարութիւն կը տկարանայ բայց չի մեռնիր , ազատութիւնն կը բռնաբարուի , բայց իւր էութիւնը և գոյութիւնը չի ոչնչանար ։ Հաւասարութիւնը կը խանգարուի բայց չի ապականուիր , զի ասոնք այնպիսի սկզբունքներ են , որք ամփիփանոփ մէջ անփոփոխ կը մնան , և ապականելով աշխարհի փլատակ փոշիներու մէջէն կրնան կրկին վերածնիլ ։ Չի մարդկութեան միութեան բաժանումն ալ իրեն սահման ունի , և երբ սոյն սահմանը լեցուի և նոքա միութեան ձեռնարկեն , մեր զօրութիւնը պիտի տկարանայ այն ժամանակը մեր ամէն հնարքները վեր ՚ի վայր կը տապալին ։ Ուստի սոյն վիճակը փոխել պէտք է , բռնի և սկսեցին գիտութիւն և մտածութիւն քերել և անհետացունել ժողովրդեան սրտէն և նորա տեղը տգիտութիւն և անզգայութիւնը տուին , եւ անոնց խորհուրդները ստորերկրեայ փլատակաց տակը թաղեցին ։

Ժողովուրդ մը ուրիշ ժողովրդին հետ չըմիանալու համար , նոցա իրարու հետ ունեցած առնչութիւնը կտրեցին , և զանոնք իրարմէ բաժանեցին , ու նոցա մէջ տեղը անջրպետեցին , այն տարիճան խանգարեցին նոցա միութիւն որ այլ եւս անկարելի եղաւ իրենց ազատութեան միջոցը խորհիլ , նախապաշարեցին զանոնք կանխակալ կարծիքներով , ահաւոր առնչանքներով բանտ և կախաղաններ հնարեցին , իշխանութեան ճիւղերը ընդարձակեցին և տարածեցին զանազան ճիւղերու բաժանմամբ՝ աշխարհ ահարեկ ըրին ։

Եւ իւրաքանչիւր բռնապետ եւ տիրապետ իրենց կիրքերն եւ մոլութիւններն առած աշխարհ մտան , և աշխարհ ապականեցին ։

Ամբարտաւան և անկամլիթիար Բէլ մի աշխարհի հիմնադութենէն նոր

digitised by A.R.A.R.@

տերի եղած փափուկ միջոցին մարդկու-
թեան առջևը իր միայնակ իշխանու-
թեան տակը կը նուաճէ․ Մէնէգաղայ
երկնաբերձ անմատչելի կոհակներու և
բարձրացուցանելու համար, ժողովուր-
դին անարգ գործերու և ազնուար-
կութեան ու քաղաքականութեան կը
դատապարտէ, և արարածին, արար-
չի դէմ ապստամբել մտածելը և յաղ-
թելու ցնորական երազներով կը զը-
ռանցէ ։

Աղէքսանդր Մակեդոնացին փառա-
սիրութեան կիրքերէն] յաղթեալ և
տիեզերակալութեան բաղձանքներէն
յափշտակեալ դրեթէ երկրագունդի
մեծ մասը կը յեղափոխէ և իրեն ան-
զուսպ բաղձանաց և անխորհուրդ կա-
մաց չը հնազանդող ժողովուրդ] և ազ-
գեր 'ի սուր սուսերի կը մաշէ և
աշխարհ աւերելով կ'ըսէ․ "Ինչպէս
որ մի է արեգակն հողագնդիս, այսպէս
ալ մի պիտի լինի տիեզերակալ իշխա-
նութիւն Աղէքսանդրի ։

Որպէս թէ Արարիչն զայն տիեզերա-
կալ ստեղծած լինէր, և կամ ժողո-
վուրդներն և ազգերը անոր կամաց
հպատակ և ստրուկ գերիները ստեղ-
ծուած լինէին ։

Ներոն և Դիոկղետիանոս իրենց
կռապաշտութեան չը հետևելով և ա-
զատ խղճի դրօշակի տակը ապաստա-
րել ուզող ժողովուրդները անխնայ կը
կոտորեն ։

Տիտոս և Վեսպասիանոս աստուածա-
ծանօթ ժողովուրդը չարաչար և դառն
տանջանքներով կատամահ կ'ընեն,
քաղաքները կը կործանեն չէնքերը
կայրեն, Աստուծոյ նուիրական տեղերը
կը պղծեն և իրենց կամաց չը հնազան-
դող ժողովուրդը ոչնչացունել կը մը-
տաբերեն ։

Լենկթէմուր իրեն անձնատուր
չեղող և չը հնազանդող ժողովուրդ-
ները և ազգերը, և մինչև իսկ դիե-
ցիկ մանկունք անխնայ սրոյ ճարակ կը
տայ և նոցա արեամբ լեռ կը կազմէ և
կը լողայ իր անզուսպ կրից բերկրու-
թիւն տալու համար ։

Ինչո՞ւ շատ հեռանամք դեռ երեկ
անթիւ զօրականներ և երկու ընդար-
ձակ աշխարհներ և անթիւ ընտանիք
զոհ գնացին երկու փառասէր կրից ։

Յունաստան մէկ աղջ'կան համար
անթիւ զոհեր կուտայ և զոհեր
կ'առնու և համբաւաւոր Տրովադայ
հողակոյտ մը կը դարձնէ և նորա ա-
նունը հողոյ տակը կը թաղէ և կ'ան-
հետացունէ ։

Շամիրամ Արայի գեղեցկութեան
յարեալ, Հայաստան աւերն ու փոյ
կ'ընէ և միլիոնաւոր մարդիկ կը կո-
տորէ ։

Անխորհուրդ Պապ մը, ոչինչ տեղ
արեւելք և արեւմուտ իրարու դէմ
կը գրգռէ և արեւելեան պատերազմ
կը յարուցանէ անհամար արիւններ
կը թափուի, ժխոր արեւելեան ծայ-
րէն մինչև արեւմտեան ծայրը կը
հասնի ։

Բաբիլոնը ընչաքաղցութեամբ մո-
լեգնեալ Պաղեստինու քաղաքները
հրձիգ կ'ընէ և ժողովուրդն շղթայա-
կապ յեափոս մինչև Բաբիլոն կը
մղէ և գերութեան ծանր լծոյն տակ
զայն կը դատապարտէ, և անարգ
գործերով կը զբաղեցունէ, ճշմարիտ
Աստուծոյ անունը նոցա ուրանալ տա-
լու պատճառանօք ։

Եգիպտոս իր միակ փրկիչ և բա-
րերարի սերունդ ժողովուրդը գերու-
թեան կը դատապարտէ սոխ և սխտո-
րով միայն բաւականացնելով զանոնք
տիւ և գիշեր անհանգիստ ազնուար-
կութեան անարգ գործերուն կը դա-
տապարտէ, և նորածին մանկանց խեղ-
դել կը հրամայէ ։ Յազկերտ, Շահա-

digitised by A.R.A.R.@

պող․ Ճենկիզխան Պարսիկները մոգական կրակը ձեռք առած Հայաստան կը դիմէն Նուիրական տաճարները կործէն, կամ կրին երկրպագութեան հրաւէր կը կարդան, չը լսողը հրով կը դատէն, քաղաքները եւ աւանները կը կործանեն, ժողովուրդը 'ի սուր սուսերի կը մաշեն ։

Նաբուգոդոնոսոր, Սենէքարայ դաշտի մէջ անդրի կը կանգնեցունէ, եւ ժողովուրդը բռնի երկրպագութեան կը դատապարտէ, ապստամբները գեհենին կը մատնէ և հրոյն կը ծախէ ։

Անդրալեռնական կղզերնէ աղանդաւորաց դէմ հալածումը կը հանէ, անթիւ անհամար մարդիկ կառափնարաններուն կը մատնէ աշխարհակալներու ձեռօք ։

Սնապաշտութիւնը Եփեսոսի ժողովուրդը երկար ժամանակ Արտեմեայ կռոյն մեհեան շինելու կը դատապարտէ և անթիւ հարստութիւն կը փշացունէ, մեծագործութիւն և հրաշակերտութիւն անուն առնելու համար, բայց ժամանակէ մը վերջ փոքրիկ լուցկի մը անոր ամբարտաւանութիւնը յանդուգս կը խոնարհեցնէ, այն աճիւն կը դառնէ և յիշատակն կ'անհետացունէ ։

Շամիրամայ Բաբելոնի պաշտպանութեան ցնորական տենչը, գերամբարձ պարիսպները կանգնելով ժողովրդեան կեանք և հարստութիւնը 'ի կորուստ կը մատնէ ։

Տգէտ փառամոլութիւնն Ապողոնի անուան պղնձեայ վիթխարի արձանը կը կանգնէ Ռոտոսի նաւահանգստին վրայ ժողովրդին հարստութիւնը սպառելով, և քիչ ժամանակէն մէկ ցնցմամբ յերկիր կը տապալի անկանգնելի և որուն հետքն անգամ այսօր մեզ անըմբռնելի է ։

Կամբիւզ Եգիպտոս ապիերը և ժողովուրդները կեղեքելով բրգունձները ամպարտակները կը կանգնէ իր փառասիրութեան կոթողը մինչև կենդանի պահելու համար, ժողովրդեան յետին թշուառութեան հասնիլը եւ միայն սոխ և սխտորով շատանալն իրեն խղճ՝ չինէր ։

Սողոմոն որ իմաստութեան անուան տակ իբրեւ Մենովս կը պարծէր, արքունի պալատը եօթանասուն թագուհիներով ութսուն հարճով և անթիւ օրիորդներով կը լեցունէ ժողովրդեան արեան գին և արդար վաստակը կեղեքելով նոցա պճնասիրութիւնը կը գոհացունէ ։

Ահա՛ ասոնք և սոցա նման շատերը կերպերով զինեալ աշխարհ մտան, մարդկութեան ազգութիւնն ու դաշնակութիւն խանգարեցին ։

Երբ ժողովուրդ գեղերու և աւաններու մէջ իրեն պատսպարան գտած և ապաւինած էր, բանակէտը զօրքեր սահմանեց, գունդեր կազմեց նոցա փառք պատիւ, իշխանութիւն հարստութիւն խոստացաւ իրեն թիկունք առաւ իրմէ աւելի չարագոյները, և ժողովրդեան ապաստանարանները քանդեց այրեց, կապտեց կողոպտեց եւ մոխիրներու վրայ նստեցաւ ։

Իրաց այս պարագաներու մէջ երբ ժողովուրդ հարկադրեալ մահով բռնաց պատժելու, մեռնելու և կամ իր ազատութեան ձեռք բերելու խորհուրդները կը յղանար, միւս կողմէն անդիմադրելի և անընկճելի զօրութիւն մը տեսաւ իր գլխոյն վրայ կանգնած ։

Այս այն խումբն էր, որ ժողովրդեան սրտի ներքին գաղտնեաց բանալին իրեն ձեռք առած ոչ զէնք ունէր ոչ զօրութիւն, սակայն անպարտելի անյաղթելի և ամենազօրի մը պէս մէկ անկերպով կը վարէր զժողովուրդ ուր կամ՝ ուր ուզէր ։

digitised by A.R.A.R.@

Բռնապետները ժողովրդեան կենաց ընչից և ստացուածոց վրայ կ'իշխէին, իսկ սոքա մարդկանց և Աստուծոյ յարաբերութեանց գաղտնեաց մէջ մտան ։

Մարդկանց խորհրդոց վրայ թագաւորեցին, հոգիներուն տիրապետեցին, մարդկանց հաւատաքննութեան ատենին, խարոյկներով պատժեցին, և ժողովուրդն նախապաշարելու և ահացուցանելու խաբար իրենց անսասող պահելու համար, բարձունքներէն ըսպառնալիքներ բերին, լեռներու գլխէն մշուշներու մ ջէն պատգամներ տուային, միայն Աստուծոյ միայն վերապահեալ ներքին գաղտնեաց և խորհրդոց գիտակ ձեւացան, անցեալներիս և ապառնի գաղտնիքներուն նախատեսող հանդիսացան, դժոխքներ կազմեցին և իրենց չը հնազանդողները հոն անշէջ հրով յաւիտեան այրելու սպառնալիքը տուային ։

Արքայութիւն յօրինեցին իրենց կամակատարները հոն երջանկացուցին ։ Ուրուականներ ձեւակերպեցին մարդիկ ահացուցին, մէկ մէկ աստուած դարձած տիրեցին և տիրապետեցին, սոքա մէկ կողմէն, բռնաւորն միւս կողմէն, խեղճ ժողովուրդ որ կամ դարձաւ զինք Թակարդի մէջ տեսաւ ։

Պարսիկ Արհմ և Որմիզդ աստուածները կը ստեղծէ միայն բարեաց և միւսոյն չարեաց հեղինակութիւնը կու տայ, և կրակն 'ի տեղի Աստուծոյ պաշտել կը հրամայէ, եւ նոյն աստուածութեան պաշտօն կ'ընծայէ, չը հնազանդողը հրով կայրի և սրով կը վերջանայ։ Լուսոյ եւ արեգական երկրպագութեան հրաւէր կը կարդայ ժողովրդեան և անզգայ տարերքներէն յաջողութիւն կը յուսայ, արարածական տարերք Արարչին հետ կը փոխանակէ։

Եգիպտոս, Մեմփիսի կովուն աստուածութեան պատիւը կու տայ, բանական մարդիկն անբանին կը զոհէ, անշունչ անզգայ տարերքներէն պատգամ կը սպասէ և բառ մ'մ կը անօրինէ իր գործերը ։

Յունաստան յաւերժահարսունք կը ստեղծէ և նոցա աստուածութեան անուններ կ'ընծայէ, և զատ զատ հեղինակութիւններ կու տայ նոցա, այսինքն մին սիրոյ աստուած, միւսն ցանկութեան աստուած, մին յաջողութեան աստուած, ձախորդութեան աստուած, առաջնորդող աստուած, պաշտպան աստուած, ծովու եւ ցամաքի աստուածներ կը սահմանէ, և նոցա պատգամներով ժողովուրդը կը ջլատէ և պղուտոնական իշխանութիւնը կը հաստատէ, մեղապարտ հոգիները անոր առջնայ կը մտնէ ։

Հնդիկը՝ ինքզինք Գանգէս գետոյն կը նուիրէ եւ ձեւակերպ աստուածներ կը շինէ, ու անոնց առջեւը ծունկ կը խոնարհի, և Պրամայ տուած պատգամներով իր գործ կը վճարէ նման Եգիպտոսին ։

Նաև իրենց ազգականները և շատ անգամ ամենասիրելի զաւակները զոհ և պատարագ կու տան այն կուռքերուն, զորս տարին մը վերջ նախատանօք Գանգէս գետոյն կեր կու տան ։

Մէնէացին իր անթիւ կուռքերը և ձեւակերպները կը մօտեցունէ եւ աստուածական պատուով պատուել կը հարկադրէ զմարդիկ, եւ նոցա զոհեր և պատարագներ կը մատուցանէ, և ժողովրդեան ընտիր կերակուրները և հարստութեան ամենիները նոցա քուրմերուն տալ կը հրամայէ։

Երկնից մէջ երջանկութեան գաւառներ կը շինէ, երկրի տակը տանջանարաններ կը պատրաստէ, միոյն մէջ հոգիները կ'երջանկացունէ, միւսոյն մէջ կը դատէ, կը պատժէ, կը չար-

digitised by A.R.A.R.@

չարէ և միշտ Թշուառ կը պահէ ։

Հարմ՝ մարդարան եւ քաղաքան կը չինէ անզգայ և աններևոյթ մշուշներու մէջ, Հովիները Հոն զինելով կը պրէ և կը մարէ, և արքայութեան բանակներ իշխանութիւնը իրեն կը մերապահէ, ուզած Հոգւոյ կը բանայ և շուշաններուն կը զանոյ և դուրս կը թողու ։

Սպանիա Հաւատաքննութեան ատեն կը բանայ և ժողովուրդ ողջակէզ կ՚ընէ խարոյկներուն կը մատնէ ։ Այս ամէն չարիք միապետ եւ Հոգիներու տիրապետ զոյգ դաշնակից բռնութեան պաշխարհ մեան, մին սրով և միւս սարսափներով ժողովրդեան գլուխը կուրտերին կաշկանդեցին անտանելուցին անզգայուցին, իշխեցին տիրեցին գերփեցին և կողոպտեցին ։

Ժողովուրդը երբ քիչ շատ շարժումն ընել կուզէր միապետաց եւ բռնապետաց անուրը խորտակելու, Հոգեւոր տիրապետը երկնից սպառնալիքները դժոխոց սարսուռները և պատիժները կ՚առնէր կուգար, և ժողովրդեան անյաջող մէկ գործը և կամ գիտութեական մէկ ձախորդութիւնը, նորա անզգաստութեան և անհնազանդութեան արժանաւոր պատիժը կը Համարուէր երկինքէն վինք զգաստացունելու Համար ։

Երբ այս կողմէն յուսահատած իր Հոգւոյ խորհրդին ազատութիւնը եւ իր գաղափարները իրեն վերապահելու խորհուրդ կը յղանար, յանկարծակի բռնապետի սուրը վրայ կը Հասնէր և կը դատապարտէր Հնազանդելու նախապաշարման, կանխակալ կարծիքներու, երեւակայական ցնորքներու, մինպաշտամունքներու մշուշային սրուածներու և կը սպառնար թէ Հնազանդիլ պէտք է այն խուժին, զի նորա աստուծոյ խորհրդոյ եւ գաղափարաց գիտակներն են. երկրորդուն յեղաշրջելու կարող եւ աստուծոյ զօրութեան բաժանորդներն են ։ Ուստի նոցա լսել Հնազանդիլ և նոցա տուած պատուէրները կատարել պէտք է առանց քննելու և առանց խորհելու ։

Ահա այս եղաւ ժողովրդին վիճակը և սոր մէջ դատապարտեալ գիշերը անհանգիստ կը Հսկէր իր Հոգեպահիկ ընչից և ստացուածոց և իր ընտանեկան պատուոյն ապահովութեան Համար, ցորեկ շարունակ աշխատութեան դատապարտուած արեւակէզ և ցրտատառոց և իր աշխատութեան պտուղները իր ձեռքով կը տանէր բռնաւորին կը յանձնէր, նորա Հանգիստ կը վայելէին և կը բախտանային, իսկ ինք միշտ անհանգիստ և միշտ տրտում և յուսահատ էր ։

Եւ որ ամենէն անտանելին է, խեղճ կայտառ մանուկը որն որ քանի տարուան չարաչար աշխատութեամբ բերած յաջքուն Հասակի Հասուցած էր, որն որ պատրաստուած էր իր ծնողաց մխիթարութիւն լինելու նոցա քանի տարուան աշխատութեան քիրան սրբելու, անոնց յոգնած միջոյին նոցա օգնելու, աՀա կը տեսնես որ անգթմագրելի ակնարկ մը զայն կը կորզէ իր ծնողներէն կը տանի կը խառնի այն խումբին, որ Հլու Հպատակութեամբ մէկ կամաց Հրամանակատարներն են ։

Այս խումբը ազատ չէ խորհելու, ազատ չէ գիտողութիւն ընելու, ազատ չէ իր իրեւին եկած գնդակէն երես դարձունելու, այլ թէ միայն ծառայ պատրաստական գիշեր եւ ցորեկ սուր 'ի ձեռին վայրագ Հրամանի մը կը սպասէ, որուն կամ՝ իր կեանք պիտի տայ և կամ՝ իր եղբօր կեանք պիտի տայ և կամ՝ իր եղբօր կեանք պիտի փոխարինէ իր կենաց ։

Զուրկ է ասիկայ ամէն Հանգստու-

digitised by A.R.A.R.@

թիւններէ, երջանկութիւններէ և ծնողաց խնամքներէն։ Քրոջ և եղբօր քաղցր ուրախութիւններէն, ընտանեաց և զաւակաց անզուգական սիրոյ վայելչութիւններէն։ Լեռներու գլուխը դաշտերու մէջ թշնամեաց երկիւղներով պաշարուած իւր կեանք տալու և կամ իւր եղբօր կեանք բառնալու խորհուրդներով հեղձամղձուկ զառանցած այս վայրկեանէս միւս վայրկեաններն ասոկայի թափարթ մը և ահաւելի տեսարան մը աչքին առջևը պատկերացած, մահու և կենաց սաստիկ ջերմը և անհամեմատ սառն կարկտաձևեւ քրտունք ոտքն ոտոն կաթիլի պէս երեսէն վար կը սորեն, և աչք արտասուք արտմութենէն ու բարկութենէն կայծակի պէս դուրս կը ցատկեն, վասն զի այն աչք անգամ ևս իւր սիրելի բարեկամները պիտի տեսնէ՞ թէ ոչ, այս երաշխաւորեալ չէ։ Մանաւանդ զի կը տեսնէ որ մէկ կողմէն սուսերամերկ և կատաղի արագութեամբ ահագին գունդ մը անձրևոց պէս իրեն վրայ կը խոյանան կենաց փոխանակ տալու, միւս կողմէն թնդանօթաց պատրաստութիւնները որ բերաններին բացած մէկ ռումբով հազարաւոր զոհեր կլանելու պատրաստ կը սպասեն այս ժամէս միայն։

Մէկալ կողմէն կը տեսնէ երեկեան աշխարհակործան պատերազմի մէջ իւր ննտահար և կամ գնդակով վիրաւորեալ եղբայրները արտի մը անկիւն ծըռուած անոք և անօգնական անդարման յուսահատ և ճարահատ վիճակի մէջ, վէրքերն անբուժելի, վասն բաց, վէրքերը հասած, դարմանող չի կայ ոչ եւս տաքութիւնը և իւր ընտանեաց կարօտութիւնը վէրքերէն աւելի զինք կը նեղէն։

«Ո՞հ. Աստուած իմ այս ինչ խռովութիւնք է, մինն պալատի մէջ հազարաւոր սպասաւորներով և սպասաւհիներով հանգիստ կեանք վայելէ, միւսն այս գառն եւ անօթենի վիճակին մատնուի»։ Խեղճ ննտահարը փոխանակ բարձի քարի մը կռթնած գլուխն տակը, շուրջ իւր բոլորտիք կը նայի, ոչ ոք չունի զինք հոգացող եւ մխիթարող, ինչպատմաս ձայնով մը գթութիւն կ'աղաղակէ, բայց լսող չի կայ, կը պաշարուի մահուան երկիւղներով և մահուան քրտանց մէջ խորասուզելով այլ յայտնէ եղած, հայր, մայր, քոյր, եղբայր, կին, զաւակ, ազգական և բարեկամ կը կոչէ և կ'աղաղակէ, բայց ոչ ոք չի կայ նորա ձայն լսող, ճարահատեալ ձայն նուաղեալ շունչ կը սպառի և հոգին կ'աւանդէ։

Պատերազմելու համար պատրաստուած խեղճ զինուոր երբ այս ամեն աչքով կը տեսանէ, նաև իւր չարագուշակ ժամը եկած հասած մահաբոյր վայրագ հրամանը կ'որոտայ 'ի վէն ընդդէմ թշնամեաց բանակին, մեռցունել, և կամ մեռնել։ Նաև կը տեսնէ որ անթիւ մարդիկ սրոյ ճարակ գնացին և արեան ճապաղիներու մէջ կը լողան, ոմանց թևը, ոմանց ոտքը, ոմանց գլուխ, ոմանց աչք, զոհ կ'առնու թշնամին։

Միւս կողմէն կը տեսնէ որ հազարաւոր հրացաններ 'ի միասին ձայն կ'արձակեն և այս մէկ ձայնը հազարաւոր մարդիկ գնդակահար թաւալ գլոր յերկիր կը փռէ և մէկ ձայնով մը վերջին շունչ կը փչեն անմիջէ շատերը։ Նաև կը տեսնէ որ թնդանօթներու մէկ պայթումը բանակի կէսը կայծակնահար յերկիր կը թաւալէ, և անմիջէ այն խումբ որ անմիջապէս չը դիակնացաւ, այլ միայն իւր անդամներէն մէկն և կամ երկուքն կորսնցուց, նոքա բըժիշկ, դեղ և դարման, օգնութիւն, գթութիւն կ'աղաղակեն, սակայն լըսող չի կայ։



digitised by A.R.A.R.@

Այս ամենը կը տեսնէ խեղճ զինւորն կը սոսկայ կը սրտմտի և ազատութեան կը բաղձայ, բայց ո՛վ կուտայ անոր ազատութիւն, այնպիսի դիրքի մը մէջ է որ ո՛չ առաջ կրնայ երթալ և ոչ ետ կրնայ դառնալ, զի եթէ առաջ երթայ՝ թշնամւոյն սուրն է, եթէ ետ դառնայ զինք վարողի սուրն է, ուրեմն պէտք է հնազանդի կամ մեռնի եւ կամ յանիրաւի մեռցունէ իւր եղբայր։

Ա՛հ, խեղճ զինուոր, ո՛վ պիտի ինծ ազատութիւն տար դքեզ համոզելու թէ այդ պատերազմ անիրաւ է, 'ի զուր կեանք մի տար, և ո՛չ ալ յանիրաւի եղբօրդ կեանք վերջացուր։

Ո՛վ պիտի թոյլատրէր ինծ դքեզ և քու ընկերներդ համոզելու և յետս կ՚ասելու ձեր ձեռք այդ անմեղ արեանց մէջ չը թաթաւելու, որք ձեր տարաքախտութեան հանդիպած են։

Ո՛վ պիտի ազատութիւն տար ինծ դձեզ համոզելու թէ այդ պատերազմ ո՛չ աշխարհի շինութեան, ո՛չ իրաւանց և արդարութեան և ո՛չ որ և է օգտի համար է, այլ թէ լոկ մէկի մը փառասիրութեան կոթող կանգնեցունելու նպատակաւ է, ուրեմն խնայեցէք ձեր և ձեր եղբօր կենացը։

Ո՛վ պիտի զիս թոյլատրէր դձեզ համոզելու թէ ձեր կեանք գին չունի, դիւրագին մի վաճառէք, այլ յիշեցէք որ մեռնողները ձեր եղբայրներն են, եւ դուք զանոնք միայն չէք մեռցուներ, այլ նաեւ անոնց ծնողք ընտանիք, ազգականք և բարեկամք 'ի միասին կը մեռցունէք, յիշեցէք եթէ դուք այսօր յաջողիք նոցա կեանք բառնալ։

Նաև յիշեցէք թէ դուք նոցա հետ. նոցա ընտանեաց սիրտերը կորեւէք և անողջանալի կը խոցէք, և ձեր բաժինը միայն անէծք և խղճի խայթ կը մնայ։

Զօրական, թերեւս ես ազատ լինէի խօսելու, բայց դու բնաւ ազատ չէիր իմ խորհրդեանս լսելու, զի դու ինքնին չը մղուեցար, այլ բռնութիւնը մղեց դքեզ յայամ։

Զօրական եթէ այդ պատերազմ արդարութեան համար լինէր, թող ես նորա դրօշակակիր լինէի։

Եթէ այդ պատերազմ մարդկութեան հաւասարութեան համար լինէր, ես նորա զոհ և առաջին նահատակը թող լինէի։

Եթէ այդ պատերազմ մարդկութեան ազատութեան համար լինէր, ես նորա գնտակներուն կուրծքս բացած բազմադիմի վէրքեր թող ընդունած լինէի։ Որպէս զի իմ վէրքերովս մարդիկ իրենց կորանցուցած ազատութիւնը գտնէին։

Բայց աւա՜ղ, որ նոցա համար չէ, այլ թէ միայն երկրագունդէն մաս մի տեղ եւս յափշտակելու տկարներու ձեռքէն, և անզօր մաս մը ժողովուրդ եւս գերելու և կեղեքելու և բռնապետի տիրապետութեան տակը պահելու համար է, ուստի չնչին է պատերազմն, և 'ի զուր և յամպէտս կը զոհուի ձեր կեանք, առանց ձեր կամաց և սրտի յօժարութեան։

Երբ իրենց բանաւորութեան ուղղութիւն կորանցունող և կիրքերու թելադրութեամբ առաջնորդուող չարամիտ և չարասիրտ բռնապետները տիրապետները և աշխարհակալներն անխորհուրդ կերպով մարդկութեան վիճակը վրդոված և նոցա հանգստութիւն կորանցուցած, արիւնարբու գազանի պէս նախճիրներ կը գործէին, անմեղ արիւններ կը խմէին, աշխարհ իրենց կրից խաղալիկ գործուցած կը կայտռէին իրենց մոլութեանց մէջ և և կը հեշտանային, տկարները ահով և ու սարսափով պաշարուած համբե-

digitised by A.R.A.R.@

ընելով կը տանէր։

Միւս կողմէն ալ իրենց բնաւորութիւն չը կորսնցունող կրից վրայ իշխող արդարութեան և ճշմարտութեան հետեւող ազատութիւն սիրող ուղիղ բանաւորութենէն առաջնորդւող անարատ և մաքուր խղճիդ տէր սակաւաթիւ մարդկութե բարերարները և աշխարհի փրկութեան բաղձացողներ եւս կային և կը գործէին անվեհեր և աներկիւղ չորչարանաց խաչը ուսերնին առած ընկերական աշխարհին ուղղութիւն տալու և բարի վիճակի վերածելու այլ և այլ ճիւղերու մէջ մէկ մէկ Գողգոթայի զոհ դարձած առաջ կը քալէին կ'աշխատէին շարունակ խոհեմութեան շաւղի մէջ կը համբերէին կը տքնէին տիւ և գիշեր, 'ի հարկին թշնամոյն նետերու դէմ անվեհեր կուրծք կը բանային կը մեռնէին, և իրենց սկզբունքները չէին մեռցուներ։

Նոցա գործերը մէկ մէկ կենդանի կոթողներ դարձան, նոցա արիւնները մեզ դեղ կենաց եղան, նոցա ըսկզբունքները մեզ յաւերժական յիշատակներ դարձան, և այս աւուր մեր վայելած բոլոր բարիքները զինի նախախնամութեան նոցա վաստակոց արդասիքն է։

Արժան կը դատիմ այս բարերարաց մի քանիին անունները տալ, որոց առաջինը համարելով սիրոյ, ազատութեան, հաւասարութեան, արդարութեան քարոզիչ աստուածորդին Յիսուս, որ սիրոյ և միութեան հրաւէր կարդաց, ազատութիւն քարոզեց, արդարութիւնը եւ ճշմարտութիւնը սիրեց և կատարեց և մարդկիններուն այս ճանապարհէն երթալու պատուէր տուաւ։ Հաւասարութեան գործնական դասը ինք կատարեց և կատարել հրամայեց իւր աշակերտաց։ Երկրի տակը անդունդներու մէջ թաղուած այն սքանչելի օրէնք գտնելով աշխարհին բարւոք կ'առավարուելու զեկ մը չինեց, այն է. "Զոր ինչ կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ և դուք արարէք նոցա այնպէս, և զոր ինչ ոչ կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, եւ դուք մի առնէք նոցա"։

Բայց աւա՜ղ որ մանուկ աշխարհ չը կրցաւ նորա խնկական ոգին ըմբռնել, փոխանակ ոգոյն հետեւելու կեղեւներու հետ սկսեցին խաղալ, անոր համար եղիցին մի հօտ և մի հովիւ գրութիւնը, յետաձգեցաւ. փոխանակ լոյս ըստանալու, սէր սերմանելու, միութեան հրաւէր կարդալու, արդարութեան և ճշմարտութեան քարոզ լինելու, ազատութեան շահատակներ լինելու, հաւասարութեան զինակիր լինելու, զի ատոնց համար և այս սկզբունքները աշխարհի մէջ ծաւալելու և տարածելու համար եկած էր, բայց նոքա այսինքն Աստուածորդւոյն հետեւողները, բացառութեամբ մը, ըսկսեցին երկու բնութեան և մէկ բնութեան խնդիրներով խաղալ, Հոգւոյն 'ի Հօրէ միայն, թէ 'ի Հօրէ և 'ի յՈրդւոյ կը բղխի խնդիրներով օրոճալ։

Ասով հեռացան իրենց կոչման նըպատակէն և հեռացուցին զժողովուրդըն միութեան դրօշակի տակ մնալէն և փոխանակ հաւաքելոց ժողովելոց և միացուցանելոց, արդէն միացեալները ցրուեցին, և արդէն այս՝ կը պահանջէր բաժանանէր միապետաց օգուտըն և շահն։

Գրիգորները, Ներսէսները, Սահակ Մեսրովպները ընդ նոսին և Վռամ Շապուհ լոյս աղաղակեցին, գիտութիւն տարածան և սերմանեցին, որբերը խնամեցին, անկեալ և վիրաւորեալները գուրմնեցին և պատսպարեցին, ժողովրդեան գիտութիւն սէր և միու-

digitised by A.R.A.R.@

թիւն քարոզեցին և ուսուցին, ազատութեան ջատագով հանդիսացան, արդարութեամբ վճարելոյն իրենց գործերը և ժողովուրդն այնպէս ընթանալ պարտաւորեցուցին, աշխատութիւնը յամենայնի յաղթող է քարոզեցին և գնացին ։

Նաև գտնուեցան այնպիսի իշխաներ և տիրապետներ, որք իրենց բանականութիւնը ուղղութեան մէջ պահելով կրցան որոշել թէ ինչ է հասարակաց հայր լինելը և թէ պէտք է ժողովուրդը հաւասարութեան մէջ պահել, և թէ պէտք է նոցա գործերը արդարութեան օրինաց համաձայն դատել, և թէ անիրաւութիւն է նոցա ազատութիւնը բռնաբարել, եւ թէ անգթութիւն է և հայրութեան պաշտպանութեան դէմ է անկեալ և վիրաւորեալն չը խնամել և չը պատսպարել և նոցա պիտոյք չը հոգալ, եւ թէ եղեռնագործութիւն և զրկողութիւն է ուրիշի ընչից և ստացուածոց տիրապետել և գրաւել, և թէ արդարութեան և իրաւանց դէմ է անիրաւ և փառասիրութեան կամ շահասիրութեան համար պատերազմ հրատարակել և անմեղ արիւններ թափել ։

Այլ եղան այնպիսի իշխանապետներ եւս որք զժողովուրդը հանգստ և խաղաղ պահեցին և կառավարեցին, սակայն սոքա բացառութիւններ համարուեցան, վասն զի թուով քիչ էին և բռնաւորաց իշխանութեան անսականութիւնը յոյժ նուազ, որովհետև աշխարհի մեծ մասը ապականուած էր, չարիքը հսկայաքայլ առաջ կը մղուէր բարիները շուտով կը վերջանային ։ Մանաւանդ երբ բարի իշխանաց չար որդիք կը յաջորդէին, այն ժամանակ ժողովրդին ցաւը կրկին կը լինէր, մին բարի իշխանի կորուստը կ՚ողբայ, միւսն չար իշխանի իրենց հասուցած աղէտ, վիշտ և տառապանքներ կը կրէր ։

Մինոս իւր հանճարեղ և անսխալ օրէնքներով Յունաստանին ուղղութիւն կուտայ և ժողովուրդն այն օրէնքներով բարեպէս կ՚առավարուի ։

Սեսոստր իւր ժամանակի մէջ Եգիպտոսը կերջանկացունէ, ժողովուրդ գոհ և զուարթ կը պահէ այնպէս որ նորա մահուն որք առհասարակ լացին և սուգ պահեցին ։

Ահա՛ տանք և այսպէս շատերը զորս վերջէն պիտի յիշեմք բնական լուսով բանականութեան ջահ պայծառ և վառ պահեցին, ինքեանք բարեպէս կենցաղավարուեցան և իրենց ժամանակի ժողովրդին բարեպէս հովուեցին և որոց բարի յիշատակները պատմութեան հոգին մեզ բերաւ հասոյց, որոցմէ լոյս եւ յոյս առած կարող եմք մեր կորուստները ձեռք բերել և իւրեւ ընկերական մարդ բարւոք և երջանիկ ազատ ու հաւասար ապրիլ աշխարհի մէջ ։ Բռնութիւնները խորտակել, խաւարները մերժել և հալածել, փոխանակ մարդոյ՝ օրէնք թագաւորեցընել, օրինօք վարուիլ, օրինօք դատել, օրինօք պատժել, օրինօք պսակել, ազատ ապրիլ, հաւասար ապրիլ, ոչ որ չը մնասել և ոչ որ է չը մնասուիլ, զի այսպէս կը պահանջէ արդարութեան օրէնքը ։

Որովհետև բանականութեան խանգարումը և կիրքերու զօրանալը զմեզ բերաւ այս աղէտալի վիճակին հասոյց, ուրեմն մենք քանի որ այսօր մեր սխալումները կը ճանաչեմք, պէտք է զայն սրբագրեմք այսինքն կիրքերը նուաճեմք, բանին ոյժ եւ զօրութիւն տամք, գիտութիւն և իմաստութիւն սիրեմք, աշխատիմք և ստանամք, խորհուրդ մեզ առաջնորդ ընտրեմք, վասն զի այն գործերը որ առանց խորհրդոյ

digitised by A.R.A.R.@

են միշտ անուղիղ են և սխալ, այս մեզ ցոյց տալու անցելոյն կենսագրութիւնը։ Քանզի կրից գործերը հաւանական են, բնազդման գործերը անսանձական են, և կամաց գործերը առանց խորհրդին խառը և անուղիղ են մանաւանդ յաւի։ Խորհուրդն է որ ամենուն ուղղութիւն կուտայ և զանոնք կը կանոնաւորէ։

Խորհուրդն է որ առուան ճշմարտէն, անկրաւութիւն արդարութենէն պարապ խրատունքէն կ'որոշէ և իւրաքանչիւր իրեն տէրոջ կ'ուտայ։ Խորհուրդ կ'որոշէ սիրոյ տարրերան և նորա սահմանը, խորհուրդ կրնայ գտնել բաժանեալ եղբարց միութեան անքակտելի կապերը։ Խորհուրդն պիտի մեզ ցոյց տայ միութեան օրէնքը և անկէ առաջ գալիք արդիւնքները։ Խորհուրդ կրնայ հաւասարապէս բաժանել ուղղութեամբ չափել և կշռել, ուրեմն ամեն բանէն առաջ խորհուրդ պէտք է, զոյգ ընդ գիտութեան և իմաստութեան։

Խորհուրդն պիտի ուսուցանէ մեզ թէ մարդկութեան առաջին զաւակէն սկսեալ մինչև վերջի որդին չղթայի պէս անանջրպետ առինչ կապ ունին իրարու հետ, և մենք մի և նոյն հեղինակի գործ և մի և նոյն ծնողաց զաւակ ենք. ուրեմն իրաւամբ և արդարութբ հաւասարապէս ժառանգ ենք երկրագունդին և զայն ամենուն հաւասարապէս բաշխելու է, և որովհետև մեր կեանք անոր հետ առինչ է, պէտք է որ մեր բաժին երկրագունդը անկապտելի մնայ մինչև մեր կենաց վերջը, ոչ վաճառուի և ոչ գրաւ դրուի, այլ իւրաքանչիւր որ իւր բաժնի մէջ աշխատէ մշակէ և վայելէ, անկարօտերը աշխատութեան մասին բացառութիւն կը համարուին։

Խորհուրդն կը յղանայ և կը ծնանի ուսմունք և գիտութիւն, գիտութիւնը իրեն հետ կը բերէ լոյս և ճշմարտութիւն լուսոյ առջևէն խաւար տեղի կ'ուտայ, և կը հալածուի և իրեն հետ կը տանի և կանհետացնէ խաւարային ամեն գործերը, և յետ այնորիկ ամեն բան պայծառ կը տեսնուի, և պարզ ճշմարտութիւնը իւր յաղթանակաւ կը թագաւորէ և ամեն բան իւր իսկական պատկերով ցոյց կուտայ աշխարհին։

Ճշմարտութեան կեղծիքները կը մերժէ, և ճշմարիտ սիրով կը կապէ և կը միացնէ մարդիկ իրարու հետ սիրոյ սահմանը ընդարձակէ, սիրոյ կապերը անխզելի են երբ ճշմարիտ են, հետեւաբար սիրոյ միութիւնը անքակտելի անպարտելի և անյաղթելի է։

Սիրոյ վրայ դրուած է աշխարհի սիւները, վերցուր զերը և տես աշխարհ վերիվայր կը տապալի, ինչպէս որ եղաւ խիկ տանելութեան թագաւորութեան միջոցին սիրով հաստատուեցաւ աշխարհ, սիրով պիտի կ'առավարուի, սիրով և միութեամբ պիտի փրկուի, և միութիւնը սիրոյ արգասիքն է։

Միութիւն զօրաւոր է և անյաղթելի, ամեն զօրութիւն բաց 'ի յԱստուծոյ, միութեան առջևը կը տկարանայ։ Լեռները անոր առջևը կը խոնարհին, զօրաւորները, նորա քով կը տկարանան, 'ի մի բան զինի Արարչին միութիւնը տիեզերաց բնութիւնն է։ Ուրեմն միանալ պէտք է յաղթելու համար, ապատիլ պէտք է չինելու համար։ Բռնաւորաց ոյժը մեր միութեան մէջն է, բաժանեալ ոչխարները մէկիկ մէկիկ գայլերուն կեր կերթան։ Իսկ երբ կը միանան, գազանը նոցա մէջ մուտք չի կրնար գտնել։

Մինակ ծառը հողմակոծեալ կը տարուբերի, առանձին տունկն արեւուտապէն կը թոշնի, իսկ երբ խմբովին

digitised by A.R.A.R.@

են անվնաս են և ապահով։

Ուրեմն միութիւն պէտք է և յարատև աշխատութիւն, ասոնք ամեն բանի յաղթող են։

Եթէ ինձ չէք հաւատար, գործերուն հաւատացէք, զի գործերը իրենին կը քարոզեն կը համոզեն, կան ու կը մնան։

Միութիւնը և աշխատութիւնը աշխարհի արևելեան ծայր արևմտեան ծայրի հետ միացուց և հեռագրով կապեց, և ամենատկար ձայնը մէկ հնչմամբ բոլոր երկրագունդին կը հաղորդուի։ Կարծիքները անմիջական կերպով կ՚առնուին և կը տրուին, արևելեան ծայրէն արևմտեան ծայր մէկ ակնարկով մը ընկերական ամեն շահերը կը դիտէ և կը տեսնէ։

Միութեան ոյժը և աշխատութեան արդիւնքն եղաւ Սուէզի Կիրճի բացումը որ անհուն հեռաւոր երկիրներ իրարու մօտեցուց և ընկերական աշխարհի շահերը դիւրութիւնները և հանգստութիւնները առաջ բերաւ և ովկիանոսի վտանգները անհետացուց։

Միութեան ուժով և աշխատութեան հնարիւք շոգենաւերը ծնան, որք ովկիանոսի անպարտելի և անխորտակելի ալիքներու հետ մրցելով և յաղթելով կայծակի արագութեամբ մէկ երկրի աւելորդ բարիքներով միւսոյն պէտքն կը լեցունէ։ Քաղաքները և գաւառները կը տեղափոխէ, մարդկանց հանգստութեան դիւրութիւն կու տայ։

Միութեան ոգին և աշխատութեան յարատևութիւնն, այն հրաշալի շոգեկառք բերաւ յաշխարհ, որ մէկ ցնցմամբ քաղաքները իրարու տեղը կը փոխադրէ, երկոտասանօրեայ դժուարութիւնները մի օրեայ դիւրութեան կը վերածէ, հազարաւոր մարդկանց կարողութենէն և ձեռնհասութենէն վեր գտնուած կերը փոքր շոգիի մը զօրութեամբ աշխարհի մէկ ծայրէն միւս ծայր կը փոխադրէ, և աշխարհիս զարմանալի տեսարան մը կ՚ընծայէ։

Ահա միութեան և աշխատութեան արդիւնքները որք իսկապէս մէկ մէկ հրաշալիքներն են և մարդկանց հանգստութեան յենարաններ։ Եւ ոչ թէ այն փառամոլութեանց կոթողները որք աշխարհ տառապեցուցին, փոխանակ շինելու քանդեցին և անպտուղ ծառի պէս չորցան և անհետ եղան։

Աշխատութիւնները մէկ մէկ խոտաւէտ ծաղիկներ են զանազան լեռներու գլուխները բուսած, երբ միութեան ոգին զանոնք ՚ի մի կը հաւաքէ և փունջ կը կապէ, նոցա անուշահոտ բուրումները իրարու հետ գրկախառնելով մարդկանց հոտոտելեաց զմայլում մը կու տան և զայն կը զուարթացունեն և կը զուարճացունեն։

Ուրեմն անհատապէս աշխատինք, միանամք աշխատինք վերջապէս շարունակ աշխատինք մինչև մեր կորուստը ձեռք բերենք, վասն զի փորձառութիւնները մեզ կը սորվեցունեն որ ինչ որ ձեռք բերել կուզենք ամենքն ալ միութեամբ և աշխատութեամբ կարելի է ստանալ և ոչ ուրիշ միջոցով։ Աշխատութիւնը չէ թէ միայն կորսուած կը գտնէ, այլ և չեղածները կը ստեղծէ և կը հրաշագործէ, յերկինս կը քննէ։

Եթէ չես հաւատար ահա՛ փորձերը։ Կապերնիկ աշխատութեամբ մոլորակաց արևմուտքէն յարևելս արևու շուրջ դառնալը գտաւ։

Կոլոմպոս, աշխատութեամբ երկրաչափութեան և աստղագիտութեան մէջ այնչափ առաջ գնաց, որոյ շնորհիւ յաջողեցաւ անծանօթ Ամերիկան գտնել։

digitised by A.R.A.R.@

Ճէյմս Ուօթ, տաժանելի աշխատութեամբ շոգեշարժ մեքենային ազնիւ գիւտը բերաւ յօգուտ աշխարհի։

Ճօրճ մեքենագործ 'ի ձեռն աշխատութեան շոգեկառքի հնարքն գտաւ եւ աշխարհի հանգստութեան դիւրութիւն մը ընծայեց։

Վօքանսօն, աշխատութեամբ մեքենայութեան մէջ ինքնաշարժ գործիքներ հնարեց։

Պէնճամին Ֆրանգլին, աշխատութեամբ, կայծակի ելեքտրականութեն հետ ունեցած առնչութիւնը գտաւ, և անոր վնասոյն դէմ շանթարգելք հնարեց։

Զանց կ'առնում այն սքանչելի փիլիսոփայները որք յարատեւ աշխատութեամբ մեծ մարդիկ և մարդկութեան բարոյական առաջնորդները և փրկիչները եղան անոնց բանաւորութեան ուղղութիւններ տալով, անասնական նուաստ վիճակներէն մարդկութեան վեհ գահոյն բարձրացուցին։

Ահա՛ սոքա են ընկերական աշխարհի փրկիչ և բարերարները, որք իրենց յարատեւ շարունակ աշխատութեամբ և միութեամբ ամենադժուարութեանց յաղթեցին և աշխարհ վերանորոգեցին շինեցին պայծառացուցին յօգուտ և 'ի հանգստութիւն ներկայ սերնդոյս։

Թող տեսնեն և պատկառին իրենց շիրիմներէն այն անձինք, որք կիրքերէն վարակեալ մարդկութեան նշանաբանը կորսնցուցած մէկ մէկ տզրուկ դարձած ժողովրդին հոգին և մարմին 'ի միասին կը մահացունէին։

Թող տեսնեն և համոզուին այն մեծ կարծուած մարդիկ, որ նախապաշարման շնորհիւ անաշխատ եւ անվաստակ մեծութեան անուան տակ բարձր տեղերը և աթոռներու վրայ նստած իբրեւ իշամեղու ննջութեան հնարքներով ուրիշին վաստակը ուտած, նոցա արդիւնքը կուտեն ոսկի տաղարթներով զարդարեալ և պաճուճեալ, Թող համոզուին, որ իրենք չեն մեծ մարդիկ, այլ սոքա, Թող համոզուին որ իրենք չեն մարդկութեան և աշխարհի բարերարները տէր և իշխանները, հասարակաց հայրերը, որոց և այլոց իրաւամասնակիցները, այլ սոքա են, սոքա, որոց գործերը անպարտելի եւ անյաղթելի կոթողներու պէս կը փայլեն եւ կը հաստատեն ու ցոյց կուտան։

Ուրեմն Թող օրհնեալ ըլլան անոնք, Թող աճի և բազմանայ նոցա տեսակը եւ նմանք, որպէս զի բազմանալով աշխարհին ուղղութիւն տան, մարդիկ ազատեն և հաւասարութեան մէջ պահեն։

Նաև մեզ Թող առաջնորդ լինի նոցա գործնական դասը, եթէ ազատութեան հաւասարութիւնը կը սիրեմք, պէտք է, որ մեր կիրքերը եթէ ոչ իսպառ ջնջեմք, գոնէ չափաւորեմք և ուղիղ բանաւորութեան հպատակեցնեմք, խորհուրդ մեզ առաջնորդ ընտրեմք, խորհրդով միանամք, սէրն մեզ դաշնակից ընեմք, զի անկեղծ սիրոյ դաշինք անխզելի և անքակտելի է, գիտութեան լոյսը մեր սրտերու մէջ վառ պահեմք։

Խորհիլ պէտք է հասուն խորհրդով, գործել պէտք է անընդհատ և շարունակ, Թող համր լինի հոգ չէ, շատ է որ խոհեմութեան շաւղի մէջ լինի և անընդհատ։

Խորհիմք վերոյ սիրելու համար, զի ամենքս մի և նոյն Արարչի արարածները եւ մի և նոյն ծնողաց զաւակներն եմք, հաւասար եղբայրներ, ժառանգ և ժառանգակիցք միմեանց հաւասարապէս պարտուց կատարող Թէ Աստուծոյ Թէ մարդկութեան եւ Թէ երկրագունդին, այսպէս ալ հաւասարապէս բաժին և իրաւունք ունիմք ե-

digitised by A.R.A.R.@

բերէն եւ ամէկոյ անմխալելի է, և ան-
ուրանալի ։

Եթէ խորհինք կուտանինք այն ա-
մեն բաները ինչ որ մենք չենք գիտեր, և ինչ որ Ճշմարտութիւններ են. եթէ ուտանինք, ինքնաբերաբար կը սոր-վինք սիրելու, եթէ սիրենք կը միա-նանք, եթէ միանանք՝ կը գործենք ։

Եթէ միանանք և գործենք խորհըր-դով, մեր ուժը անընկճելի է և մենք ամենազօր, յետ այնորիկ միապէս և հաւասարապէս ամենքս ազատ ենք և ամենքս հաւասար, հետեւաբար փո-խանակ բռնաւորին արդարութեան օրէնք կը թագաւորէ, ամէնուս վրայ հաւասարապէս իշխելով ։

ԽՈՐԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ
ՄԽԻԹԱՐԵԱՆ

## ԿԻՍԱՒԷՐ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅՈՑ
### Ի ԳԻՒՂՆ ԷՂԲԻՐԷՀ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Ճանապարհորդներէն կը լսուէր, որ Երուսաղեմէն 'ի Հիւ-սիս, երկու ու կէս մղոն կամ երեք ժամ հեռաւորութեամբ, Նապլուսի Ճանապարհին վերայ, Եղբիրէհ, ըստ Ս. Գրոց, Բէէրօթ գիւղի մէջ, կի-սաւէր եկեղեցի մի կայ, որ հայերէն արձանագրութիւններ ունի, բայց հիմնաւոր արդիւնք չը կար ։

Ներկայ ամսոյս մէջ խորհրդակ-ցութեամբ եւ ընկերակցութեամբ հարցաւէր միաբան եղբարց ոմանց գը-նացինք յիշեալ Եղբիրէհ գիւղն և տե-սանք կիսաւէր եկեղեցին, որ շինուած է յիշեալ գիւղին բարձրաւանդակին վերայ, որոյ աջակայքն կը գտնուին տե-ղական Արաբ շինականաց տուներն ։ Եկեղեցւոյ երեք սեղաններն մինչեւ ցկամարն և հիւսիսային ու հարաւա-յին պատերն տակաւին կանգուն են, իսկ արեւմտեան կողմն, ուր գտնը-ւած է նախագաւիթն, բոլորովին քա-կուած է և Նոր ժամանակներս բան-ջարեղինաց պարտիզի հասարակ պա-տով պատուած ։ Եկեղեցին գրեթէ քառակուսի ձեւ ունի, 34 մետր եր-կայնութեամբ եւ 20 մետր լայնու-թեամբ ։ Սեղաններու և հարաւային ու հիւսիսային կանգուն մնացած պա-տերու քարերէն կ'երեւի յայտնապէս, որ եկեղեցին շինուած է խիստ ընտիր Ճաշակաւ, ընտիր տեսակի և սրբա-տաշ քարերով, սիւներով և խոյակնե-րով, ունեցած է երկու մեծ գմբէթ միջավայրին և աւագ խորանին վերայ և թերեւս երկու փոքր գմբէթ երկու փոքր խորաններուն վերայ ։ Թէև թը-ւական չը կայ, բայց հնագիտական հետազօտութիւնն ցոյց կը տայ, որ աւելի քան ութ կամ եօթն հարիւր տարուան շէնք է, և եթէ ոչ յառաջ, անշուշտ մեր Ռուբինեան թագա-ւորական հարստութեան ժամանակ շինուած է ։ Եկեղեցւոյ միջնավայրն հողով լցուած է, այնպէս որ հողն սե-ղաններու լուսամուտներուն հասած է և բեմերն ծածկած ։

Քանի մի հատ հինօրեայ նշանի-ներ կան եկեղեցւոյն մէջ, որով եւ յայտնի է թէ երկար ժամանակէն 'ի վեր փլած է, Հարաւային պատին վերայ, ուր նշանի մի յեցած է, կայ արձանագիր, մեծաւ մասամբ անվեր-ծանելի, երկու հարիւր տարի առաջ փորագրուած, Պետրոս անուն վար-դապետի ձեռամբ, որ թերեւս իբրեւ Ճանապարհորդ անցնելով և հայկա-կան հնութիւն նշմարելով իւր անու-նըն քանդակած է, ինչպէս սովորու-

digitised by A.R.A.R.@